# ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Ոստիկանության կադրերի ընտրության և ոստիկանությունում պաշտոն զբաղեցնող աշխատակիցների վերապատրաստման /որակավորման/ գործընթացում իր առանձնակի դերն ու նշանակությունն ունի ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնը:

Դեռևս 20-ական թվականներին Խորհրդային Հանրապետությունում գործում էին կարճաժամկետ կուրսեր միլիցիոներներ պատրաստելու համար, որի նպատակն էր անգրագիտության վերացումը միլիցիայի շարքերում: Այդպիսի կուրսեր էին գործում Երևանում, Ալեքսանդրապոլում, Ղարաքիլիսայում, Գորիսում: Այս կուրսերի ծրագիրը իր մեջ ընդգրկում էր՝

- Անգրագիտության վերացում,
- Շարային պատրաստականություն:

1923թ-ին միլիցիայի կուրսերը տվեցին առաջին շրջանավարտները՝ քառասուն մարդ: Այսպիսով ուսումնական պրոցեսը տարբեր վայրերում շարունակվել է մինչև 1954 թվականի՝ ՍՍՀՄ Ներքին գործերի նախարարի հրամանը, որով ներքին գործերի համակարգում մեծ թվով հաստիքների կրճատմամբ պայմանավորված Հայաստանում դադարեցվում է միլիցիայի աշխատակիցների պատրաստման գործընթացը:

Միլիցիայի համակարգը գրագետ կադրերով համալրելու նպատակով 1956 թվականի օգոստոսի 14-ն Խորհրդային Միության ՆԳ նախարարի թիվ 00275 հրամանով որոշվեց բոլոր Խորհրդային Հանրապետություններում ստեղծել մշտական գործող ուսումնական կետեր, որի հիման վրա 1956 թվականի սեպտեմբերի 17-ին ՀՍՍՀ ՆԳ նախարարի 0036 հրամանով ք. Երևանում ստեղծվում է Հանրապետական ուսումնական կայան: Կայանի հաստիքացուցակում կար հինգ մարդ ,որը ղեկավարում էր միլիցիայի փոխգնդապետ Գուրգեն Ոսկանի Խունդկարյանը: Սրանով հիմք դրվեց ՈՒսումնական կենտրոնի գործունեությանը, որը տարբեր անուններով գործում է մինչ օրս:

Կայանը խնդիր է ունեցել անցկացնել նախնական պատրաստականության դասընթացներ՝ ՆԳ մարմիններ ընդունված շարքային և կրտսեր խմբի կազմի հետ, ինչպես նաև վերապատրաստել արդեն իսկ ծառայության մեջ գտնվող միլիցիայի աշխատակիցներին: Մասնագիտական ուսուցման ենթակա էին Քրեական հետախուզության, Սոցիալիստական սեփականության դեմ պայքարի /ՕԲԽՍՍ/, բաժինների հերթապահ մասերի, մանկական սենյակների աշխատակիցները, տեղամասային տեսուչները, դասակների հրամանատարները և այլն: Սկզբնական շրջանում կայանը տեղակայվել է Քանաքեռի պետավտոտեսչության վարչության գրանցման քննական թիվ 1 բաժանմունքի շենքում, որտեղ այն ժամանակ գրեթե բացակայում էին կենսագործունեության տարական պայմանները. չկար ճաշարան, դասախոսական կազմը և ունկնդիրները սնվում էին

Քանաքեռի սննդառի տարբեր կետերում: Հրաձգարանին փոխարինում էր Ավանի մոտակայքում գտնվող մի վայրի ձոր: Հանրակացարանին էլ փոխարինում էր առանձնացված մի սենյակ , այն էլ՝ ծայրահեղ կարիքավորների համար: Դասախոսական կազմն էլ հիմնականում հրավիրվածներ էին:

Ուսումնական կենտրոնի պետերն են եղել՝ միլ. գնդապետ Լ.Ա.Ավագյանը, միլ. փոխգնդապետ Ս.Պ.Բալայանը, միլ. գնդապետ Լ.Խ.Գրիգորյանը, միլ. փոխգնդապետ Ք.Ա.Աղաջանյանը, միլ.գնդապետներ Ա.Բ.Վանյանը, Վ.Գ.Մաթևոսյանը, Ս.Ս.Պետրոսովը, ոստիկանության գնդապետներ Ա.Զ.Անդրիասյանը, Ա.Զ.Քեշիշյանը և Վ.Հ.Նադարյանը : Այժմ ուսումնական կենտրոնը ղեկավարում է ոստիկանության գնդապետ Ա.Է.Սուքիասյանը:

1972 թվականից Ուսումնական կայանը վերանվանվեց «ՆԳՆ կրտսեր և միջին հրամկազմի պատրաստման» դպրոցի, 1985թ-ից սկսած այն կոչվեց «ՆԳՆ Ուսումնական կենտրոն», իսկ 2011թ-ից՝ «ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոն»:

1988-1994թթ. ազգային ազատագրական շարժումը և Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմը կազմալուծել էին Ուսումնական կենտրոնի գործունեությունը: Ուս. կենտրոնի շինությունները բարձիթողի վիճակում էին, զորանոցը չէր գործում, գրադարանային և լեկցիոն ֆոնդը չէր համապատասխանում ժամանակի պահանջներին, չկային Ուս. կենտրոնի աշխատանքները կարգավորող նորմատիվային փաստաթղթեր, տեխնիկական միջոցները անսարք վիճակում էին, առկա էր կենտրոնը փորձառու կադրերով համալրելու խնդիրը և բազում այլ խնդիրներ:

Վերոհիշյալ խնդիրների լուծմանն ուղված հսկայածավալ աշխատանք կատարվեց: Նախ և առաջ Ուս. կենտրոնը համալրվեց փորձառու կադրերով, սկսեցին գործել զորանոցը և ճաշարանը, հերթապահ մասի աշխատանքները մտան հունի մեջ, օրենսդրական դաշտին համապատասխան կազմվեցին ուսումնական և թեմատիկ պլաններ, դասախոսությունների տեքստեր և կոնսպեկտներ, ուս. կենտրոնի աշխատանքները կարգավորող նորմատիվային փաստաթղթեր, մասնակի վերանորոգվեցին լսարանները, հրաձգարանը, օժանդակ կառույցները:

Ուսումնական կենտրոն տեղափոխվեց ՆԳՆ «Միլիցիայի մարտական փառքի թանգարանի» ֆոնդի զգալի մասը:

2001 թվականից սկսած ոստիկանության ուսումնական կենտրոնի առջև խնդիր ծառացավ՝ ինքնուրույն մշակելու և կազմելու կադրերի պատրաստման և վերապատրաստման ուսումնա-թեմատիկ պլանները: Արդյունքում կենտրոնն ինքնուրույնաբար մշակել է և փուլերով ներդրել գործունեության մեջ: Այս փուլում ՀՀ ոստիկանության ուսումնական կենտրոնը իրականացնում էր Ներքին գործերի նախարարության բոլոր ստորաբաժանումների, այդ թվում Հրշեջ պահպանության և Կալանավայրերի վարչության, կրտսեր խմբի նախնական պատրաստականության և վերապատրաստման , ինչպես նաև միջին խմբի վերապատրաստման /որակավորման/ դասընթացներ:

ՀՀ ոստիկանության ուսումնական կենտրոնի մեթոդական ապահովումը բարելավելու, նոր տեխնոլոգիաներ ներդնելու, ուսուցման առաջավոր ձևերի և նոր մեթոդների ներդրման նպատակով անհրաժեշտ էին մոտեցումներ, կրթական և նյութատեխնիկական անհրաժեշտ բազա՝ Եվրոպական չափանիշներին համապատասխան: Իրականացվեցին գործուղումներ, ինչպես ԱՊՀ, այնպես էլ արտերկրների համանման ուսումնական հաստատություններ: ՌԴ, Ուկրաինա, Հունգարիա, Իսպանիա, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Մակեդոնիա, Էստոնիա գործուղված համապատասխան աշխատակիցները մասնակցեցին միջազգային ուսումնական գործընթացի կատարելագործմանը նվիրված սեմինարներին և խորհրդատվություններին: Արդյունքում ձեռք բերված գրականության, մեթոդական առաջարկությունների, ինչպես նաև կատարված հետևողական աշխատանքների շնորհիվ կենտրոնի ուսումնական գործընթացը բավականաչափ բարելավվեց: Սակայն, ժամանակը, կապված կենտրոնի հետագա կատարելագործման հետ, դարձել էր անհետաձգելի: Կենտրոնի բարեփոխումների նպատակով 2003 թվականից սկսվեց համագործակցության գործընթաց ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի հետ: Արդյունքում 2003 թվականի հուլիսի 29-ին Երևանում կնքվեց «ՀՀ ոստիկանության և ԵԱՀԿ-ի միջև կարիքների ուսումնասիրման և ոստիկանության օժանդակության ծրագրերի մշակման» հուշագիրը: Ի շարունակումն սկսված գործընթացի՝ 2005թ-ի մարտի 15-ին Երևանում ՀՀ ոստիկանության և ԵԱՀԿ-ի միջև ստորագրվեց «Ոստիկանության Ուսումնական կենտրոնի վերազինման և վերանորոգման» համաձայնագիրը: 2006 թվականի ապրիլի 13-ին ՀՀ ոստիկանության և ԵԱՀԿ-ի միջև կնքվեց «Ուսումանկան կենտրոնի շինարարական աշխատանքների վերաբերյալ» համաձայնագիրը: Մի կողմից բարեկարգվում, նորացվում էին շենք-շինությունները, մյուս կողմից ԵԱՀԿ, ԱՄՆ դեսպանության և ՀՀ ոստիկանության հետ մեկտեղ ձեռք էին բերվում անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, սարքավորումներ, գույք և կահավորանք:

Վերանորոգման և շինարարական աշխատանքներն իրականացնելուն զուգահեռ 2005թ-ի հոկտեմբերից մինչև 2007թ-ի մարտ ամիսը Ուս. կենտրոնի դասընթացներն անխափան կազմակերպվել և իրականացվել են Քանաքեռ-Զեյթուն համայնքի տարածքում տեղակայված թիվ 103 միջնակարգ դպրոցում վարձակալված մասնաշենքում: Ուս. կենտրոնի կապիտալ վերանորոգումն ավարտելուց հետո 2007թ-ի մարտի 23-ին տեղի ունեցավ ինչպես կենտրոնի բացման, այնպես էլ Ուս. կենտրոնի 50-ամյա կազմավորմանը նվիրված հանդիսավոր միջոցառումը:

Ուս. կենտրոնում մինչև 2011թվականը իրականացվում էր Ոստիկանության միջին, կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների վերապատրաստման /որակավորման/ դասընթացները, իսկ 2004թ-ից սկսած իրականացվում էր ոստիկանությունում կրտսեր խմբի պաշտոններում նշանակման ենթակա քաղաքացիների /թեկնածուների/ եռամսյա փորձաշրջանը: Զենք կրելու թույլտվություն ստանալու նպատակով Ուս. կենտրոնում կազմակերպվում և անցկացվում են նաև «Հատուկ պատրաստականություն»

դասընթացներ՝ «Հատուկ կանոնադրական խնդիրներ» իրականացնող իրավաբանական անձանց աշխատակիցների համար:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո ԵԱՀԿ-ի միջոցներով կենտրոնին տրամադրվեց նաև ներքին հաղորդակցման ցանց, ահազանգման համակարգ, ժամանակակից ուսումնական սարքավորումներ, մասնագիտական գրականություն, լազերային հրաձգարան, ստեղծվեցին մասնագիտական լսարաններ, սիմուլացիոն սենյակ, ինչպես նաև ժամանակի պահանջներին համապատասխան հանրակացարան: Ուսումնական կենտրոնն ապրեց առաջընթաց, վերելքի և զարգացման շրջան՝ ի շնորհիվ ուսումնական գործընթացի բաղկացուցիչ մասը կազմող բարձր տեխնոլոգիաների /աուդիո, վիդեո, պրոյեկտոր, լազերային, համակարգչային տեխնիկա/, որի օգտագործումը նոր աստիճանի է բարձրացրել ուսումնառության որակը:

Դասընթացներն իրականացվում են ինտերակտիվ նորագույն մեթոդներով՝ բևեռված ուսանողակենտրոն ուսուցման վրա:

Ուս. կենտրոնում ուսուցումը մշտապես պայմանավորված է յուրաքանչյուր պաշտոնական կատեգորիայի համար նախատեսվող մասնագիտական գիտելիքների կատարելագործման, գործնական հմտությունների և ունակությունների իմացության պահանջներով:

ՈՒսումնական կենտրոնում 2004թ-ից մշակվել և իրականացվել են առարկայական ծրագրեր՝ Կարևորելով ժամանակակից ոստիկանի բարոյա-հոգեբանական կայուն հատկանիշների անհրաժեշտությունը, հայրենասիրության, պետական մտածելակերպի, պետական շահը անձնականից վեր դասելու գաղափարախոսության ձևավորումը :

2009թ-ի փետրվարի 24-ին ՀՀ ոստիկանության պետ, գեներալ-մայոր Ա.Սարգսյանը և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ղեկավար, դեսպան Սերգեյ Կապինոսը ստորագրեցին համատեղ հրաման, որը բխում էր 2008թ-ի նոյեմբերի 27-ին ստորագրված «ՀՀ ոստիկանության և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի միջև համագործակցության մասին» հուշագրի պահանջներից և նախատեսվեց ոստիկանության ու բնակչության միջև գործընկերության ամրապնդման, ինչպես նաև ոստիկանության կրթական համակարգի բարելավման հարցերով աշխատանքային խմբերի ստեղծում, աջակցություն հասարակական կարգի ապահովման գործում:

ՀՀ ոստիկանության պետի և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ղեկավար, դեսպանի 2009թ-ի փետրվարի 24-ի թիվ 444-Ա/11/09 համատեղ հրամանի համաձայն ստեղծվեցին հետևյալ աշխատանքային խմբերը՝

1. Ոստիկանություն - բնակչություն գործընկերության ամրապնդման հարցերով աշխատանքային խումբ՝ ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոտիկանության գեներալ-լեյտենանտ՝ Հ.Հունանյանի և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ռազմաքաղաքական հարցերով պատասխանատու՝ Կառլ Հոֆստրայի նախագահությամբ:

2. Ոստիկանության կրթական համակարգի բարելավման հարցերով աշխատանքային խումբ՝ՀՀ ոստիկանության ուսումնական կենտրոնի պետ, ոստիկանության գնդապետ՝ Ա.Անդրիասյանի և ԵԱՀԿ քարտուղարության ոստիկանության հարցերով պատասխանատու Վյաչեսլավ Վորոբյովի նախագահությամբ:

Կրթական բարեփոխումների խումբը կատարեց հսկայածավալ աշխատանք ուղղված Ոստիկանության կրթական համակարգի բարեփոխումների ռազմավարությանը, մշակվեցին օրենսդրական, նորմատիվ իրավական այն ակտերը, որոնք ապահովեցին կրթական բարեփոխումների իրականացումը:

Բարեփոխումների արդյունքում 2011թ-ին ստեղծվեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրը՝ ոստիկանության ակադեմիայի և ուսումնական կենտրոնի միավորմամբ, որում կազմավորվեց նաև Ոստիկանության Քոլեջը: Նման միավորման նպատակն էր ապահովել ոստիկանությունում կրթական աստիճանական ուսուցման համակարգ:

2012 թվականից ուսումնական կենտրոնն իր գործունեությունը շարունակում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի տարածքում՝ վերանորոգված մասնաշենքում, որտեղ առկա են բոլոր անհրաժեշտ պայմանները արդյունավետ ուսումնական գործընթաց իրականացնելու համար:

Այժմ Ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնը Իրականացնում է հետևյալ ուսումնական ծրագրերը՝

- Նախնական մասնագիտական կրթության «Ոստիկանական գործ» մասնագիտության «Ոստիկան» որակավորման դասընթացի
- Ոստիկանության կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների վերապատրաստման /որակավորման/ դասընթացներ:
- Զենք կրելու թույլտվություն ստանալու նպատակով հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատակիցների հատուկ պատրաստականության դասընթացներ :

2012 թվականից մինչև 2014 թվականը, համաձայն 26.10.2012 թվականի ՀՀ ԿԳ նախարարի հրամանով հաստատված Նախնական մասնագիտական կրթության 0103 <<պահնորդական գործ>> մասնագիտության <<պահնորդ>> որակավորման կրթական չափորոշիչի, իրականացվել են վճարովի դասընթացներ:

ՀՀ օրենսդրական իրավական դաշտում կատարված փոփոխությունների արդյունքում, և կրթական որակը եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով, Ուս. կենտրոնում իրականացվում է մոդուլային եղանակով ուսումնառության ապահովումը:

Ժամանակակից ոստիկանին ներկայացվող պահանջներից ելնելով ուսումնառություն անցնող սովորողների համար մշակվել է նոր ուսումնական ծրագրեր:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնը ակտիվ մասնակցություն է ունեցել Ոստիկանության իրավաստեղծ աշխատանքների ծրագրերի շրջանակներում իրականացվող նորմատիվ իրավական ակտերի մշակման գործընթացներին:

Նոր կրթական ծրագրի իրականացումը միտված է պատրաստված կադրերով ոստիկանության համակարգի ապահովմանը, հասարակության մոտ ոստիկանության նկատմամբ վստահության և համագործակցության բարձրացման և վերջինիս ակտիվ ներգրավումը հանցավորության դեմ պայքարի և հասարակական կարգի պահպանության գործին: